ԱՐՍԵՆ ԳԼՋՅԱՆ

ՊԱՐՈՆՅԱՆԻ ԹԱՏԵՐԳՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑԸ ՆՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Հակոբ Պարոնյանի կատակերգություններից լավագույնը «Պաղտասար աղբարն» է, որը նաև հայ և համաշխարհային գրականության գոհարներից է:

Պարոնյանը մեծ նշանակություն է տվել այս ստեղծագործությանը, շատ է ցանկացել բեմադրված և լրջորեն արժևորված տեսնել այն: Նույնիսկ ինքն է խնդրել քննադատներին գրախոսել: Չի հաջողել:

Այս շրջանում երգիծաբանի նպատակների և հետամտած խնդիրների մասին վկայում է «Խիկարում» տպագրված ծանուցումը, որտեղ հայտնել է, թե ցանկանում է մի քանի կատակերգություն գրել և դրանց մեջ ներկայացնել «ազգային կյանքեն քաշված իրողություններ». ցույց տալ «ազգային վերքերն» և «ազգային ծեռնհաս մարմնոց ուշադրությանը հանձնել» (10, 421)[1]:

Հարց է ծագում. ի՞նչ պիտի հասկանալ «ազգային վերքեր» ասելով: Կատակերգության առաջին գրախոսը Սանտալճյանը, և հետագա ուսումնասիրողները նկատի են ունեցել ազգային կենցաղում երևան եկած հոռի երևույթները: Ըստ Սանտալճյանի, «Պաղտասար աղբարը» «ազգային կատակերգություն մ'է, որ նպատակ ունի ծաղկել ամուսնական դատավարութեանց մեջ դատավորաց ընթացքն, ցույց տալով անհարմար ամուսնություններե ծագող աղետն և անբարո սիրահարաց, ուխտադրուժ, գռեհիկ և լիրբ կանանց վատություններն ու նենգությունները»[2]: Գ. Ստեփանյանը, տասնամյակներ անց անդրադառնալով նույն խնդրին, քիչ նոր բան է ավելացրել ասվածին: «Պաղտասար աղբարում,- գրել է նա,- զուգահեռ ընդգծվում է երկու գաղափար, մի կողմից՝ քաղքենիական բարքերի բազմակողմանի ցուցադրումը, մյուս կողմից, լիբերալ մտավորականության խոսքի ու գործի հակասության բացահայտումը»: «Միաժամա-

նակ.- շարունակել է նա,- վառ պատկերներով գծված է ժամանակի երիտասարդության վիճակը, երիտասարդություն, որի համար տիպական է իր եսասիրական հաշիվները թաքցնել ժողովրդի լուսավորության, դաստիարակության և այլ հարցերի մասին արտասանվող դատարկ խոսքերի տակ»[3]: Իսկ Մ. Մկրյանը կատակերգության բովանդակությունը փաստորեն հանգեցրել է «բուրժուական ընտանիքի բարոյական անկման պատկերը» ներկայացնելուն[4]:

Մեր տեսակետից, Պարոնյանի՝ բովանդակության հարստությամբ և ձևի կատարելությամբ լավագույն դրամատիկական երկը պետք է մեկնաբանել՝ նկատի ունենալով բնագրի ներքին օրենքները: «Պաղտասար աղբարը», անշուշտ, որոշ նմանություն ունի Գ. Սունդուկյանի և 19-րդ դարի այլ թատերգակների ստեղծագործության հետ: Եվ Պարոնյանը, և նրանք պատկերել են հայ առևտրական բուրժուազիայի կյանքը, ծաղրել ընտանեկան կենցաղի ու բարքերի հոռի կողմերը: Դասական ռեալիզմի դիրքերից ցույց են տվել, որ սեփական-նատիրական հարաբերությունների ծնունդ այդ մարդիկ մեծամիտ են և ահավոր, երբ հնարավորություն ունեն դրսևորելու իրենց գիշատիչ խառնվածքը և այլն: Միաժամանակ, խոցելի են ու ծիծաղելի: «Ինձ Գարասիմ Յակուլիչ կոսեն»[5],- գոռոզաբար իրեն ներկայացնում է Սունդուկյանի Զամբախովը» («Խաթաբալա»): Պարոնյանի Պաղտասարին ևս բնորոշ են որոշ նման գծեր: Նա էլ ինքնագոհ կեցվածքով հոխորտում է. «Ինձի Պաղտիկ կըսեն, գործս գիտեմ ես» (1, 305-306): Սակայն պարոնյանագետների մեծ մասն անտեսել է մի էական հանգամանք. Սունդուկյանի և մյուսների համար գերխնդիր էր 19-րդ դարի հայ առևտրական բուրժուազիայի նկարագիրը, կենցաղի ու բարքերի թերությունները բացահայտելը, պատկերելը: Եվ նպատակի տեսակետից լիովին արդարացված է, որ, ինչպես նկատել է Ե. Ալեքսանյանը. «Սունդուկյանին հետաքրքրում էին ամենից առաջ ընտրված տիպերի բնորոշ դասային և ազգային գծերը, պատկերված միջավայրի սոցիալական որոշակիությունը», նրա կատակերգություններում «դասային տիպականը երբեմն գերակշռում է անհատականին»[6]:

Այլ էր Պարոնյանի նպատակը: Մարդկանց և ազգերի հիմնահարցերի շուրջ մի ամբողջ «վարդապետություն» մշակած երգիծաբանը նոր ստեղծագործության մեջ զարգացրել է իր գաղափարները: Գրելիս հետևել է հների այն

պատգամին, թե մանուկներին սովորեցնում են երեխաները, իսկ չափահասներին արվեստագետները:

«Պաղտասար աղբարը», մեծ իմաստով, այլաբանություն է, որի օգնությամբ երգիծաբանն արևմտահայության հետ «զրուցել» է նրա կյանքի հիմնահարցերի «ազգային վերքերի», դրանց վտանգավոր հետևանքների, նաև ուղիղ ճանապարհի վրա կանգնելու անհրաժեշտության մասին:

«Ամեն մի թերզարգացած մարդ ինքն իր ծաղրանկարն է»[7],- գրել է Շլեգելը: Պարոնյանը, հանձին Պաղտասարի, 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայության երգիծական կերպարը կերտելով, այս ելակետից ասել է հետևյալը. դու, հայ մարդ, ինչ կարծիք էլ ունենաս քո մասին, միևնույն է, մի Պաղտասար աղբար ես, շուկայի մարդ, որը գլխավորապես ստամոքսի ու մարմնի պահանջների մասին է մտածում արդեն քանի տասնամյակ...

«Յուրաքանչյուր մարդու համար դատաստանը նրա գործերի ու դրանց հետևանքների մեջ է»[8],- գրել է Բելինսկին: Պարոնյանի կողմից այս Պաղտասարի նկատմամբ ծաղրի ու դատաստանի հիմքը նրա գործերի և դրանց հետևանքների գիտակցությունն է: Իբրև սխալ ապրած մարդ, ասել է նա, դու արժանի ես անողորմ ծաղրի ու արհամարհանքի: Բայց սա դեռ բոլորը չէ. այսպես ապրելը շարունակելու դեպքում քեզ մռայլ ապագա է սպասում...

Երգիծաբանը, սակայն, դառը ճշմարտությունը բացահայտելով, կանգ չի առել: Իր խնդիրը համարել է նաև բուժամիջոց ցույց տալը: Հայ մարդ, շարունակել է այլաբանական խոսքը նա, քո փրկությունը միայն այն ժամանակ կլինի, եթե խելքդ գլուխդ ժողովես, դարձ կատարես դեպի հայրերիդ փորձված ճանապարհը, ապավինես բնատուր ընդունակություններիդ, սթափ հայացքով վերաբերես շրջապատիդ, ճանաչես նոր իրականության օրենքներն ու սովորես «սկզբունք պաշտպանել» (1, 389):

Պաղտասարի վերոհիշյալ կերպարը երգիծաբանի «դասի» միայն առաջին մասի տեսանկյունից է մոտ Սունդուկյանի և ուրիշների գծած կերպարին: Բայց կատակերգության մեջ հանդես է գալիս նաև սթափված Պաղտասարը, որը շատ տարբեր է ավանդական ոգով կերտված կերպարներից... Օրհասական դրության մեջ նրա դրսևորած դրական բնութագծերը՝ կենսունակություն, ողջամտություն, հումորի զգացում, մարդկային դրական իդեալների դիրքերից

ամեն ինչ իմաստավորելու հակում և այլն, չեն հանդիպում դասի մյուս ներկայացուցիչներին պատկերող կատակերգություններում: Պաղտասարը այս դրվագներում արդեն նոր կերպար է, որը խորհրդանշում է ժամանակին լուրջ վրիպումներ թույլ տված հայության ենթադրվող օրհասական մաքառումը փակուղուց դուրս գալու, ճիշտ ճանապարհի վրա կանգնելու համար:

Կատակերգության համառոտ սյուժեն այսպիսին է. Պաղտասարը տարիներ առաջ շեղվել է հայրերի ավանդույթներից, կարծել, թե նոր դարաշրջանի ոգին ներդաշնակ է իր շահերին: Թատրոն է գնացել, այնտեղ հրապուրվել մի կնոջով, ամուսնանալով հետը՝ կենցաղն ու բարքերը համապատասխանեցրել է «լուսավորյալ դարի» պահանջներին: Այսպես ապրելուց հետո, ահա, նրա աչքերը բացվում են... Պատահականորեն տեսնում է, որ կինն ինչ-որ տղամարդու հետ վատահամբավ տնից է դուրս գալիս: Շուտով գլխի է ընկնում, որ շրջապատված է անբարո «բարեկամներով»: Չհանդուրժելով խայտառակությունը որոշում է ամուսնալուծվել, բայց չի կարողանում:

Կնոջ և նրա սիրեկանի խարդավանքների հետևանքով նրան են մեղադրում անբարոյականության մեջ, սպառնում՝ հոգեբուժարան ուղարկել, եթե տեսածը թյուրատեսություն չհամարի: Ինքնապաշտպանական բնազդով թոթափելով պատրանքները Պաղտասարը մտմտում է աղետալի դրությունից դուրս գալու ելքը: Այստեղ պարզ է դառնում դառը ճշմարտությունը. քանի որ չափազանց անհեթեթ է եղել նախկին ընթացքը, փրկվելու մեկ հնարավորություն է մնում. առերես ընդունելով դատաստանական խորհրդի պարտադրանքը, ժամանակ շահել, գործերը կարգադրել ու Ամերիկա փախչել, որը և պատրաստվում է կատարել կատակերգության ֆինալում:

Կատակերգության «մարմինը» խորապես ռեալիստական բնույթ ունի: Ճիշտ է, գործող անձերը ներկայացված են երգիծաբար, երբեմն, չլսփազանցությունների միջոցով, սակայն կենդանի մարդիկ են՝ բազմազան հատկություններով, տարբեր կողմերից և խորքով դիտված:

Գլխավոր հերոսը՝ Պաղտասարը, կատակերգության սկզբին մի սահմանափակ մարդ է, որի աշխարհն սկսվում ու վերջանում է շուկայով, ուտել-խմելով, հագնվելով, կնոջ կողքին պառկելով... Կինը՝ Անույշը, հեգնանքով է պատմում նրա անցյալի մասին: Ինքն է նրան «բարձր դասու ընկերության մեջ»

մտցրել. նախկինում հետամնաց մեկն էր՝ բոլորը նրան քամահրանքով Պաղտասար աղբար էին կոչում (1, 319-320): Աղախինը՝ Սողոմեն, վկայում է, որ նրա ամենօրյա պահանջները կապված են եղել կերակուրի, «լաթերի» և անկողնի հետ (1, 304): Կիպարը՝ կնոջ սիրեկանին էլ հավաստում է, որ նա «տգեղ, տգետ, տձև և տմարդի» մարդ (1, 302) է եղել, որի կնոջը, բնական է, որ ուրիշը պիտի սիրի:

Պաղտասարին հեգնանքի արժանի դարձնողը, սակայն, միայն շուկայի մարդ լինելը չէ, այլև նորագույն իրականության մասին թյուր պատկերացում ունենալը: Չգիտի, որ ամեն ինչ այնպես է փոխվել, որ նույնիսկ ամենազոր համարվող դրամով ճշմարտություն ու արդարություն կարող է գնել ոչ ամեն ոք, ուստի օրհասական պահին նույնիսկ փողի վրա չի կարելի հույս դնել: Չի հասկանում, որ ժամանակավրեպ է իր բարոյական հոխորտանքը. «Իրավունքն ու արդարությունը իմ հետս ըլլան ու չկարենամ դատը վաստկիլ, իրավ, խենթանալու բան է կամ ճաթելու»: Նաև այն գիտակցությունը, որով փորձում է դատարան դիմել. «Եթե արդարադատությունը վերցված չէ աշխարհես, անպատճառ պիտի հայտնվի իմ անմեղությունս» (1, 376):

Կատակերգության երկրորդ մասում Պաղտասարը փորձում է հաղթահարել իր պարսավանքի արժանի գործերի հետևանքները և ուղիղ ճանապարհի վրա կանգնել:

Միջավայրի հետ բախման ընթացքում ծաղրի ու հեգնանքի է արժանանում շուկայի մարդ Պաղտասարը, իսկ «մյուսը» դրսևորում է հայությանը բնորոշ դրական բնախոսական գծերը: Պարզվում է՝ օրհասական վիճակներում նա այնքան էլ հիմար չէ, կարող է իրականության նկատմամբ սթափ հայացք, իր իրավունքը պաշտպանելու կամք դրսևորել, հումորի զգացում ունի, աշխարհի և կյանքի հիմքերի մասին՝ համոզմունքներ:

Գործողությունների ծավալման ընթացքում պարզ է դառնում, որ լուրջ բնույթ ունի Պաղտասարի և միջավայրի հակադրությունը: Պաղտասարի դիմաց կանգնած մարդիկ սովորական անբարո անձեր չեն՝ իրենց կեցվածքով, գործերով խորհրդանշում են իրականության ու դարաշրջանի կերպարանքը: Ոչ միայն հոդս են ցնդեցնում նրա պատրանքները, այլև ցույց տալիս իր ապրած կյանքի աստառը: Պաղտասարը աստիճանաբար դառնում է զգոն, դրսևորում դիմադրողականություն:

Կատակերգության բովանդակության խորքը թափանցելու տեսակետից կարևոր է ճշգրտել, թե ինչպիսի՞ երգիծական կերպար է Պաղտասարը, և ինչպիսի՞ ծաղրի է ենթարկվել: Երգիծաբանը թեկուզ դաժանորեն ծաղրել է նրան, սակայն ներկայացրել է իբրև հումորական հերոս, որի համար երկու ելք է տեսել կամ կործանվել, կամ, որ ցանկալի է, սթափվել մոլորություններից:

Իսկ Պաղտասարի ապրած որոշ զգացմունքները ողբերգակա՞ն են: Այո՛, քանի որ Կիպարի, Անույշի և մյուսների դեմ կռվելիս նա հենվում է մարդկային արժեքավոր իդեալներին, դրանց բացակայության պատճառով է դառն զգացումներ ունենում: Նա, գուցե, սիրելով էլ ամուսնացել է. մի դրվագում ինքը խոստովանում է այդ: Սակայն նման փաստերը դեռևս Պաղտասարի մարդկային որակը չեն բնութագրում: Նման մարդկանց սերը և ողբերգությունը համապատասխանում է իրենց նկարագրին, նոր երանգ չի հաղորդում կերպարին, դեր չի կատարում կոնֆլիկտի լուծման գործում: Հետևաբար ճիշտ չէ խոսել «ողբերգական և կոմիկական տարբեր միահյուսումների» և Պաղտասարի կերպարի «տրագիկոմիկական բնույթի» մասին[9]:

Շուկայի մարդ Պաղտասարի նկատմամբ ծաղրի մեջ առկա սատիրական-հեգնական երանգը պայմանավորված է կերպարի սոցիալական ու բարոյական էությամբ. ոչնչություն է այս մարդը՝ նրանից լուրջ գործ ակնկալելու տեսակետից: Ընդ որում, մանր ոչնչություն չէ, որին պայմանների զոհ դիտելով, արժե կարեկցել: Նա իր հասարակության մեջ ծլարձակող չարիքի համար պատասխանատուներից է...

Պաղտասարի աչքի առաջ իր երևութական հմայքից առաջինը մերկանում է Անույշը՝ կինը: Պաղտասարն այն պարզամիտ տղամարդկանցից է, որոնք կարծում են, թե արտոնյալ են կանանց նկատմամբ. կարող են նրանց «առնել», առանց կամքը հարցնելու՝ իրենց շահերին ու հաճույքներին ծառայեցնել և այլն: Այդ մտայնությամբ էլ ամուսնացել է և ապրել, մինչև որ նրա համար պարզվել է դառնագույն ճշմարտությունը: Մանավանդ, ակնհայտ է դարձել, որ իրեն բախտ է վիճակվել այնպիսի կին, որի «կոչումը» միաժամանակ ամուսնուն և սիրեկանին փաղաքշելն է...

Անույշը հակասական ներաշխարհ ունի: Սիրում է հաճույքներին տրվել, ամուսնուն դավաճանել, Կիպարին չկորցնելու համար խոստանում է ավելի

բուռն սիրել: Ըստ տեղի, անամոթ ու սանձարձակ լինելով, միաժամանակ, հումորի զգացում ունի...

Պաղտասարի բուն կոնֆլիկտը, սակայն, ոչ թե Անույշի, այլ իր «ընտանիքի բարեկամ», միաժամանակ, կնոջ սիրեկան Կիպարի հետ է: Կատակերգության մեջ չափազանց կարևոր է նրա կերպարը: Ծիծաղելի է Պաղտասարը, սատիրական հեգնանքի արժանի, բայց երբ կանգնում է Կիպարի դեմ, փորձում դիմադրել, մենք նոր միայն շփվում ենք իրականության գերարատավոր հերոսին:

Ու՞մ է ներկայացնում Կիպարը: Մ. Սանտալճյանի տեսակետով՝ նա «անբարո» սիրահարի[10] մի կերպար է: Իսկ այն գրականագետները, որոնք կատակերգության բովանդակությունը հանգեցնում են «բուրժուական ընտանիքի բարոյական անկման պատկերը» ներկայացնելուն, Կիպարին համարում են «բուրժուազիայի նոր, այսպես կոչված «լուսավորյալ» սերնդի տիպար»[11]: Մեր տեսակետով, Կիպարը խորհրդանշում է օսմանյան նորագույն իրականությունը՝ չարագույժ մի «հերոս», որն ոչ միայն այլասերված բարքերի արդյունք է, այլև չարագործություն կատարելու մեծ հարմարություն ունի, քանի որ դարի «հարազատ» զավակն է: Խոսուն է հետևյալ փաստը: Պաղտասարը և Կիպարը միաժամանակ դիմում են ամենազոր դրամի օգնությամբ դատը շահելու փորձված եղանակին, բայց հաջողության հասնում է միայն Կիպարը:

Պաղտասարը և Կիպարը ներկայացնում են կոնֆլիկտի երկու կողմերը, իսկ մյուս գործող անձիք նպաստում են բացահայտելու հիմնախնդիրը:

Կիպարը ներկայանում է իբրև «դարուս լուսավորյալ ոգին» ըմբռնած երիտասարդ (1, 388), բայց իրականում աչքի է ընկնում ցինիզմով: Նրա տեսակետից սեփական ախտերը այնպիսի թերություն չեն, որ Պաղտասարը իրենց բարեկամությունը վերջացած համարի: «Դիցուք թե սիրած եմ ձեր կինը,- ասում է նա Պաղտասարին,- բայց քեզի ի՞նչ ըրած եմ...» (1, 388): Կիպարը նաև նոր կանանց սիրելին է: Նրա էական բնութագծերից է սեփական ցանկասիրությունից հեշտությամբ չհրաժարվելը. երբ բացահայտվում է նրա խայտառակ կապը, նա ոչ թե ճողոպրում է ասպարեզից, այլ որոշում է «ամեն վարպետություն գործ դնելով» «մտերիմ բարեկամին» հուսահատեցնելու, ստիպելու նույնիսկ ներողություն խնդրել:

Կիպարի նկատմամբ երգիծանքը. սատիրական լինելով, աստիճանաբար ստանում է սարկազմի բուռն ատելության և արհամարհանքի գծեր:Հիշենք, թե եվրոպական լուսավորության այս կեղծ մոհիկանը ինչպես է փորձում իր ստրատավոր գործերը սքողել բարեկամությունից, խղճից խոսելով: «Կը ցավիմ, թե հին մարդոց պես կը խորհիք և ձեր կարծիքներն բնավ չեն համապատասխաներ դարուս լուսավորության ոգվույն»,- ասում է նա Պաղտասարին (1, 388): Վերջինիս առարկությունը, թե՝ «Տունս կը քանդե՞ս և կը հարգե՞ս իմ անձս...» (1, 388), ավելի է ընդգծում Կիպարի նկատմամբ սարկազմը, մանավանդ որ նա շարունակում է ճամարտակել. «Ո՞վ կ'ըսե թե կը քանդեմ ձեր տունը, ենթադրելով թե կը սիրեմ ձեր կինը, ուրիշ բան մ'ըրած չեմ ըլլար, այլ պարզապես սկզբունք մը պաշտպանած կ'լլամ, բայց այս սկզբունքը ձեր սկզբանց կը հակառակին եղեր, վնաս չունի, թող սկզբունքները կռվին...», «Տասնհիններորդ դարն ողջ-ողջ կրակի մեջ նետվելու չդատապարտեր այն երիտասարդն, որ յուր բարեկամին կինը սիրելու կը դատապարտվի բնութենե: Դարուս քաղաքակրթությունն կորոնե այն պատճառներն, որոնց համար երիտասարդն ստիպված է յուր բարեկամին կինը սիրելու...» (1, 389): Իսկ Պաղտասարը կծու ծաղրով նրան ասում է. «Խիղճդ քեզմե ավելի անամոթ և դուն խղճեդ ավելի լիրբ ես» (1, 387):

Կատակերգության մեջ կարևոր դեր ունի «արդարության գործակատար» Օգսենը: Սողոմեն՝ Պաղտասարի աղախինը, որ մարդկանց լավ է ճանաչում, բնազդաբար զգուշանում է նրան տուն թողնել: Իսկ Օգսենը համառում է ու, ներս խցկվելով, անմիջապես կեցվածք ընդունում. «Ինչ խայտառակություն է աս, Պաղտասա՛ր աղբար» (1, 308): Զգալով, որ խոսքը տպավորություն է գործում, աշխատում է օգուտ կորզել. «Փաստաբան մը, իրավագետ մը, արդարության գործակատար մը բռնաբարված է...», «փոխարինություն կը պահանջեմ»... (1, 309): Բայց հետո տեղի է տալիս խնդրանքներին՝ «խնդրույն մեջ թյուրիմացություն» (1, 310) տեսնելով և սկսում է հարցուփորձել՝ «խնդրույն հիմը» լավ ըմբռնելու համար: Պաղտասարը պատմում է. ցավոք, պարզվել է, որ կինը անբարոյական ճանապարհի վրա է, ինքը ցանկանում է ամուսնալուծվել:

Պաղտասարի բնական ցանկությունը, թվում է, փաստաբանի կողմից իսկույն համապատասխան վերաբերմունքի կարժանանա, որին և կհաջորդեն

տրամաբանական քայլերը: Սակայն մտնելով «գործակատարության» մեջ, նա վերածվում է ծաղրելի սոփեստի:

Օգսենը նման է համաշխարհային գրականությունից հայտնի փաստաբանի հավերժական կերպարներին: Նա նաև իր դարաշրջանի բնորոշ հերոսներից է: Խոսուն է այն հանգամանքը, որ Կիպարը, թեկուզ գիտի, թե «Փաստաբաններու մեծ մասն արդարությունն և իրավունքն հոն կը գտնե, ուր շատ ոսկի կը տեսնե»(1, 328), բայց Օգսենին չի կաշառում: Երգիծաբանը նրա նկարագրի մեջ ավելի ընդգծել է «մեղմացուցիչ դեպք հանցանացի» սոփեստության նկատմամբ նվիրվածությունը:

Պաղտասարը, պատրաստվելով դատ բանալ Անույշի և Կիպարի դեմ, չափազանց լավատես է դատի ելքի հարցում: Իսկ Օգսենը զգուշացնում է «լուսավորյալ» դարի տրամաբանությունից. «Առանց օրինաց վճիռն ստանալու իրավունք չունիք այդ կնոջ լիրբ և անպատիվ ըսելու, ձեր տիկինն դեռ պարկեշտ ու պատվավոր կին մ' է աշխարհի և օրինաց առաջ»(1, 312): Բացատրում է նաև, թե արդի դարաշրջանում դատը շահում են ոչ թե նրանք, ովքեր արդար են, այլ ովքեր «իրավաբանական և փաստաբանական» «կարողություններ» են դրսևորում, «հանցավոր» կամ «անմեղ» ոչ թե լինում են, այլ նրանց այդպես «շինում» են փաստաբանները (1, 317):

Օգսենի նկատմամբ երգիծանքը պայմանավորված է «արդարության գործակատարության» օգնությամբ հացը վաստակող մարդու նկատմամբ վերաբերմունքով:

Խորհրդանշական կերպարներ են նաև դատաստանական խորհրդի անդամները Երկաթը, Սուրը, Փայլակը մանր առևտրական մարդիկ, որոնց, Կիպարի «մասնավոր այցելությունից» հետո, նրա հոր ձիու տարիքը ավելի է հետաքրքրում, քան Պաղտասարի ողբալի վիճակը: Սպասվում էր, որ Պաղտասարի դիմումը պիտի քննվի, սակայն պարզվում է, որ նրանց սեղանին երեք դիմում է դրված՝ Կիպարինը, Անույշինը և, հետո՝ Պաղտասարինը: Եվ նրանք, իբրև լուսավորյալ դարի մարդիկ, նախ, Անույշի դիմումն են քննում ու դրա հիման վրա որոշում ընդունում:

Բուռն, արհամարհական ծաղրի են արժանացել դատաստանական խորհրդի անդամները: Հեգնել է նրանց ամեն ինչը՝ անունները, շարժվածքը, գործե-

լակերպը, հավակնոտությունը, կաշառակերությունը, որկրամոլությունը, կնամոլությունը, թեթևամտությունը:

Գործող անձանց շարքը եզրափակում են Պաղտասարի աղախինը՝ Սողոմեն և դրացի կանայք: Սողոմեն հակապատկերն է պոլսահայ այն ծառաների, որոնք, աղքատ ընտանիքից լինելով, սովորաբար կրավորական դեր ունեին քաղքենի ընտանիքներում (հիշենք Գր. Զոհրապի նորավեպերի հերոսուհիներին): Այս աղախինը բարոյապես հիվանդ հասարակության մի գործուն անդամն է՝ անբարոյականությանը սպասավորող: Նույն սանրի կտավ են նաև Մարթա և Թագուհի խոսուն անուններով դրացուհիները:

Պաղտասարը, փորձելով պաշտպանել իր դատը, հայտնվում է մի շատ հեգնական դրության մեջ, երբ ստիպված է պաշտպանվել Անույշից, (որը զրպարտում է, թե ինքը ցանկանում է նրան խեղդել), Սողոմեից, (թե իբր ինքը աչք ունի նրա վրա), դրացի կանանցից, (որոնք Կիպարից կաշառված, հերյուրում են, թե ինքը իբր նրանցից մեկի աղջկան է խելքից հանել, մյուսին խոստացել հետը ամուսնանալ): Իսկ դատավորները խորհուրդ են տալիս բոլորին գրավոր ներկայացնել իրենց բողոքը...

Ծանոթագրություններ

1. Պարոնյանի ստեղծագործություններից մեջբերումները՝ երկերի ակադեմիական ժողովածուից՝ 10 հատորով, 1962-1979, տեքստում նշվում է հատորն ու էջը:
2. Մ. Սանտալճյանի նամակը Հ. Ասատուրին, 3/15 նոյեմբեր 1891, ԳԱԹ, Պարոնյանի ֆոնդ:
3. Գ. Ստեփանյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, Եր, 1964, էջ 451:
4. Մ. Մկրյան, Հ. Պարոնյան: Տես Երկեր երկու հատորով, հ. 2, էջ 238:
5. Գ. Սունդուկյան, «Խաթաբալա»: Տես Երկեր, Եր, 1984, էջ 125:
6. Տե՛ս Հայկական ռեալիզմի տեսության ու պատմության հարցեր, էջ 181:
7. Фридрих Шлегель , Эстетика, философия , критика, в двух томах , т. 2, М. 19 8 3 , стр. 364.
8. Վ.Բելինսկի, Մեր ժամանակի հերոսը,: Տես Ընտիր երկեր, էջ 136:
9. Ա. Մակարյան, Երգիծական գրականություն, Եր, 1957, էջ 148-149. Էդ. Զրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Ե.,1980, էջ 228:
10. Մ. Սանտալճյան, նշված թատերախոսականը, «Խիկար», 1887, մայիս, էջ 312:
11. Մ. Մկրյան, Հակոբ Պարոնյան: Երկեր, հ. 2, էջ 239: